Հաստատում եմ

Տնօրեն Է. Բաղդասարյան

01.09.22

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ԴԱՍՂԵԿԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

2022-2023 ՈՒՍ ՏԱՐԻ

8-րդ դասարան

Կրթա-դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)։ Դասարանը բաղկացած է 6 աշակերտներից։ Դասարանում սովորում են 3 տղա, 3 աղջիկ։ Դասարանում բարձր առաջադիմություն ունեցող աշակերտների թիվը մեծ է։ Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են, սիրով և ժամանակին են հաճախում դպրոց։ Ձևավորված է առողջ և միահամուռ կոլեկտիվ։
2. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում։ Դաստիարակությունը դպրոցական կրթության կարևոր բաղադրիչ է, որի հիմնական խնդիրներն են սովորողների մեջ քաղաքացիական պատասխանատվության և իրավական գիտակցության ձևավորումը։ ՈՒսումնադաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը։ Պետք է աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ։
3. Հայեցի դաստիարակություն։

- Հոգևոր դաստիարակություն- այս նպատակով աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ։ Զրույցներ անցկացնել եկեղեցիական տոների մասին։
- Գեղագիտական դաստիարակություն-զրույցների, էքսկուրսիաների, պոեզիայի երեկոների, հանդիպումների միջոցով ձևավորել գեղագիտական ճաշակ։
- Ռազմահայրենասիրական դաստաիարակություն կազմակերպել միջոցառումներ, ցերեկույթներ աշակերտների մեջ բարձրացնել ռազմահայրենասիրական ոգին։ Հիշել հերոսներին, նրանց սխրանքները, հաղթանակի օրերը, նշել հայոց բանակի օրը։
- Ֆիզիկական դաստիարակություն-ֆիզիկական դաստիարակության առանցքը «առողջ հոգին առողջ մարմնում» դրույթն է, իսկ դրա գրավականներն են ֆիզիկական աշխատանքը, մարզումը, վարժությունները, որոնց միջոցով պետք է կոփեն իրենց մարմինները։
- Աշխատանքային դաստիարակություն- աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը, նյութական արժեքների պահպանման աշխատելու պահանջ և ձգտում ունենալու դաստիարակումը։
- Բնապահպանական դաստիարակություն-աշակերտներին ծանոթացնել բնապահպանական հիիմնախնդիրներին, դրանց էությանը, և ուշադրություն դարձնել հիմնախնդիրների լուծմանը։

4. Դպրոց-ընտանիք կապը։ Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը, միևնույն ժամանակ գիտակցեն, որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց- ընտանիք կապը, որպիսի ավելի լավ սովորեն։

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

8-րդ դասարան /34 ժամ/

Ուսումնական շաբաթ	Ուսումնա_դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ժամկետը	կատարողներ
1.	Զրույց <<Ուսումնառության ներքին կարգապահական կանոնները>> թեմայով: Նպատակը աշակերտներին իրազեկել աշակերտական էթիկայի և դպրոցի կարգապահական կանոններին:	7.09.2022	Դասղեկ աշակերտ
2.	Քննարկել աշակերտների հետ նրանց նախասիրությունը մասնագիտության ընտրության գործընթացում:	14.09.2022	Դասղեկ աշակերտ
3.	<<ՀՀ անկախությունը>> Հայրենասիրական դաստիարակություն	20.09.2022	Դասղեկ աշակեր
4.	Մեդիագրագիտություն: Նպատակը իրազեկել աշակերտին ինչպես վերլուծել ցանկացած տեղեկատվություն:	28.09.2022	Դասղեկ աշակերտ
5.	Իմ իրավունքները և պարտականությունները դպրոցում Նպատակը աշակերտներին իրազեկել դպրոցում իրենց պարտականությունների և իրավունքների հետ	05.10.2022	Դասղեկ աշակերտ
6.	10 հուշում մեդիագրագետ քաղաքացուն: Նպատակը իրազեկել աշակերտներին մեդիագրագետ լինելու քայլերի հաջորդականությունները:	12.10.2022	Դասղեկ աշակերտ
7.	Օդային տագնապ: Նպատակը իրազեկել աշակերտներին օդային տագնապի ժամանակ իրականացվող անվտանգ կանոների հետ:	19.10.2022	Դասղեկ աշակերտ ՆԶՊ ուսուցիչ
8.	Զրույց և քննարկում «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության համակարգը և խնդիրները» թեմայով Պաշտպանության կոլեկտիվ միջոցները և միջոցառումները	02.11.2022	Դասղեկ աշակերտ ՆԶՊ ուսուցիչ
9.	Մեդիագրագիտություն: Տարբերակել ապատեղեկատվությունը և մանիպուլյացիան համացանցում:	09.11.2022	Դասղեկ աշակերտ
10.	Մեդիագրագիտություն: Փաստերի ստուգման հայալեզու հարթակներ:	16.11.2022	Դասղեկ աշակերտ
11.	Զրույց և քննարկում <<Աշակերտների գործողությունները՝ տեխնածին վթարների ծամանակ>> թեմայով	23.11.2022	Դասղեկ աշակերտ ՆԶՊ ուսուցիչ
12.	Անձի ինքնաբացահայտման և ինքնաճանաչման կարևորությունը մասնագիտության ընտրության հարցում:	30.11.2022	Դասղեկ աշակերտ
13.	«Ի՞նչ է երկրաշարժը»: Իրազեկել թե ինչպես պաշտպանվել երկրաշարժից: Երկրաշարժը և երկրաշարժից պաշտպան	07.12.2022	Դասղեկ աշակերտ

	վելու վարքականոնները		ՆԶՊ ուսուցիչ
14.	Զրույց <<Հոգատար վերաբերմունք միմյանց նկատմամբ>> թեմայով: Ձևավորել ջերմ հարաբերություններ, ընկերասիրություն և ինքնուրույնություն:	14.12.2022	Դասղեկ աշակերտ
15.	Թրաֆիքինգի սահմանումը: Մարդկանց շահագործման կանխարգելմանը որքան ծանոթ լինեն, այնքան պաշտպանված կլինեն:	21.12.2022	Դասղեկ Աշակերտ
16.	Նախընտրելի մասնագիտության տեղն ու դերը մասնագիտությունների աշխարհում:	11.01.2023	Դասղեկ Աշակերտ
17.	«Հայրենասեր լինել նշանակում է ….» քննարկում	18.01.2023	Դասղեկ Աշակերտ
18 .	«Ազգ և պետություն» թեմայով բաց քննարկում և վերլուծություն «Մեր պատմության փառահեղ էջերը»	25.01.2023	Դասղեկ Աշակերտ
19.	Նպատակի սահմանումը և դրան հասնելու ձևերը:	01.02.2023	Դասղեկ Աշակերտ
20.	«Կոնֆլիկտների ծագումն ու հաղթահարումը» թեմայով զրույց: Նպատակը համերաշխ կոլեկտիվի ձևավորում:	08.02.2023	Աշակերտ Դասղեկ
21.	«Համակարգիչն ընկեր է, թե՞ թշնամի » թեմայով զրույց: Իրազեկել համակարգչի դրական և բացասական կողմերը:	15.02.2023	Դասղեկ Աշակերտ
22.	Առցանց անվտանգություն: Նպատակը Google-ում փնտրելու 19 եղանակ, որոնք կօգնեն կատարել անվտանգ և արագ որոնում:	22.02.2023	Դասղեկ Աշակերտ
23.	<<Եկեղեցին և ազգը>> թեմայով քննարկում Աշակերտների մոտ հիմնավորել եկեղեցու դերը հայ իրականության և հայ ժողովրդի կյանքում	01.03.2023	Դասղեկ Աշակերտ
24.	Երեխաների առցանց անվտանգության ապահովումը: Համացանցի միջոցով թրաֆիքինգի զոհերի հավաքագրում:	07.03.2023	Դասղեկ Աշակերտ
25.	<<Երկրաշարժը և երկրաշարժից պաշտպանվելու վարքականոնները>> թեմայով զրույց	15.03.2023	Դասղեկ Աշակերտ
26.	«Եթե ես լինեի …» թեմայով քննարկում, նպատակն է վեր հանել կարողություններն և հմտությունները:	22.03.2023	Դասղեկ Աշակերտ
27.	Առողջ ապրելակերպ Անձնական հիգիենայի պահպանման կարևորությունը:	05.04.2023	Դասղեկ Աշակերտ
29.	Առցանց անվտանգություն: Նպատակը՝ ինչպես պաշտպանել անձնական հաշիվները, տարածված 25 գաղտնաբառեր, որոնք պետք չէ օգտագործել:	12.04.2023	Դասղեկ Աշակերտ
30.	«Բարեկամներ և թշնամիներ» քննարկման միջոցով ներկայացնել հայ–ադրբեջանական խնդիրների ծագման պատճառները	19.04.2023	Աշակերտ Դասղեկ
	«Հայոց մեծ եղեռն» աշակերտներին ներկայացնել	26.04.2023	Աշակերտ

31.	թուրքերի կատարած ոճրագործությունները, նրանց մոտ սերմանել հայրենասիրություն		Դասղեկ
32.	«Հաղթում է նա, ով չի նահանջում» «Մարդ, որին կուզեի նմանվել» թեմաներով բաց քննարկում	03.05.2023	Դասղեկ Աշակերտ
33.	<<Քանի լեզու գիտես այդքան մարդ ես>> թեմայով զրույց:	10.05.2023	Դասղեկ Աշակերտ
34.	Ինտերնետի օգտագործումից բխող վտանգը:	17.05.2023	Դասղեկ Աշակերտ
35	2022-2023 ուստարվա ամփոփում	24.05.2023	Դասղեկ Աշակերտ